

Պ Ա Յ Մ Ա Ն Ք

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան . . . 12 Ֆր.

Վեցամսեայ . . . 6 «

ԱՐՏԱՍՍԱԶՄԱՆ

Երկու քիւ միկ ծաւրով

Տարեկան . . . 12 Ֆր.

Վեցամսեայ . . . 7 Ֆր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60

Վեցամսեայ 1.50 Տօլար «

Կ Ա Ն Խ Ի Կ

Ծանոցման սուղը
20 սանթիմ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՒՆՆ ՋՈՐԼՔՆԱԲԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Հ Ա Ս Ց Ի

du journal

Ir..vounk"

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

Иравунк"

ВАРНА

Գրութոյնը եւ չեւ
տրոյնը

ԴԱՏԱՍՏԱՆ

ԱՐԵՒԻՆ ՏԱԿ

«Իրաւունք»-ի անցեալ անգամ-
ուան «Պատճառը» Արդիւնքէն
առաջ» խորագրով յօդուածիս
վերջաբանովը, չեմ գիտեր յա-
ջողեցայ թէ՛ ոչ, փորձեցի եզ-
րակացնել թէ՛ անհատի մը և,
անհատներու հետ, համայնքի
մը բարոյական, նկարագիրը կա-
խում ունի քաղաքակրթութենէն
և խղճի կրօնէն, ազատ երկիրքի
ու ռամկավարական արդարասէր
կառավարութեան մը հովանիին
տակ :

Ասիկա արեւի պէս փայլող իրա-
ւունքն է, և չեմ կրօնք
թէ զոտուին մարդիկներ որ ա-
ռարկել ուզեն, թէ մարդ կըլ-
նայ ստրկութեան լուծին տակ
ալ նկարագիր մը ունենալ. բայց
ի՞նչ տեսակ նկարագիր...

Կեանքը ինքնին պայքարը
սեւ է, ու ցաւալին հոն է միայն
որ այդ պայքարը, փոխան
գիւրանալու, հետզհետէ անտա-
նելի կը դառնայ. քաղաքակր-
թութիւնը չարաչար կերպով
գործածելու մարդկային յուր
ձգտումներով :

Ասի, սակայն, երկրորդական
կարեւորութիւն ունեցող հարց
մըն է, մեզի հայերու համար :

Ինչ որ արդարեւ հարկաւոր է
մեզի այսօր, նախ ազատ երկիրն
է՝ մեր սեփականութիւնը ըլլա-
լու պայմանաւ, որովհետեւ, ա-
ռանց ասոր, մեր քաղաքակր-
թութիւնը չպիտի կրնայ իր ո-
րոշ ու անկաշկանդ ինքնուրոյն-
ութիւնը ունենալ :

Կազմիկաւ, ղեկավարէ զուրկ
նաւու մը նման, տարուբերելով
պիտի երթանք ուր որ ահեղա-
մբուռնչ հողմերը մեզի առաջ-
նորդեն, ու շատ տնգամ պիտի
քաշենք, մեր քայլամուար վաղ-
քին մէջ երբեմն նոր ու անծա-
նօթ վայրեր երևան բերելով.
ու մեր գիտը, մեր վտանգա-
ւոր ոգիականին թանկ արդիւն-
քը, պիտի ծառայէ ուրիշի մը
որկրամուտութեանը :

Մեզքը չէ՞, երբ քիչ մըն ալ
մեր խելացի ու պարտաճանաչ
գործակցութեամբ կրնանք ձեռք
ձեռքի տուած՝ նաւահանգիստ մը
ապահովել մեզի, ունենալ ան-
կախ կեանք մը, առանց որուն
ուրիշներուն քմահաճոյքին գերի
պիտի ըլլաւ. պարտքերնիս կա-
տարել, խղճեցինիս հանդարտ
մեռնիլ, գոնէ արժանի զաւակ-
ները ըլլալով այն հայրենիքին՝
զոր մեր պտպերը մեզի իրեւ
սրբտնուէր, անձեռնմխելի աւանդ-
մը թողած են, ու հիմա, աւա՛ղ,
օտարին բարբարոս ձեռքը գե-
րութեան արցունքի հովտի
մը վերածած է զայն :

Կատարած ենք այդ սրբա-
կան պարտքը :

—Ո՛չ :
Ո՛վ ախմարութիւն, ո՛վ դատ-
տարարիւն և անմիտութիւն...

Դարուս կենսապայքարը խելք
և չարքաշ աշխատութիւն կը
պահանջէ, իսկ անկախ կեանքը
արիւն և անսահման զոհողու-
թիւն :

Ակամայ մորթուիլը զոհո-
ղութիւն չի նշանակեր :

Եւ այս անկախ կեանքը ձեռք
բերելու համար անհրաժեշտ է
որ ամեն անհատ իր կարողու-
թեան չափով պարտքը կատարէ,
մէկը իր խելքով, միւսը իր գրի-
չով, երրորդ մը իր բազուկով,
չորրորդ մը իր գրամով, մնաց
եւալը թողնով մեր նախահայրե-
րու բաղումը դրմ Աստուածին,
նիւթապաշտ Եւրոպային ու բախ-
տի քմահաճոյքին :

Ո՛վ որ անգիտակցաբար չի կա-
տարեր այդ պարտքը՝ արգահա-
տանքի արժանի ախմար մարդ
մը կը դառնայ ան, մարդամե-
քեան մը, որուն անպէտ դո-
յութիւնը աւելորդ բեռ մըն է
իր պատկանած համայնքին :

Ո՛վ որ գիտակցաբար չի կա-
տարեր այդ Սրբադան պարտքը
վատ մարդ մըն է այնպիսին,
դատարար մը, անբարոյականե-
րու մեծը :

Երբ սիւտը լաւ չի գործեր՝
բնական է որ մեր մարմինն
գործարանները արդիւնաւոր կեր

պով չեն կատարեր իրենց փա-
փուկ պաշտօնը, ու մահը չու-
շանար :

Երբ տան մը մէջ շնորհքով
զլուի չի կայ ընտանիքի նախնի
անհատ իր գործելու բաժինը
ունեցած չէ, սէր, միտքիւն և
անդորութիւն կը պակսի հոն,
ի՞նչպէս կուզէք որ այդ տունը
օրին մէկը քարուքանդ չըլլայ :

Ի՞նչ ըսել հապա յեղափոխու-
թեան պէս կենաց և մահու ահա-
կու գործի մը համար, որուն
մէջ ամեն անհատ իր որոշ տեղը
ունենալու է. եթէ մէկը թերա-
նայ՝ անիկա մեղանշած կըլլայ
իր խղճին դէմ, գործած կըլլայ
ի վրա միւսներուն. ու գործը
կը կասի, և կամ բոլորովին կը
վիժէ :

Ձի մեղադրենք Թուրքիոյ հա-
յութիւնը եթէ ոչխարի պէս
մարթուի, իսկ անոնք որ քաջա-
բար կը մեռնին՝ հաւատացէք որ
այդ պաշտելի քաջերը թուա-
մորթ քաղքենիներու հիացումէն
չառ վեր են : Սուրբերէն աւելի
բարձր են անոնք մեզի համար :

Եթէ միայն սա տասնեակամարի-
ներու ազգային կեանքին արիւ-
նոտ տարեգրութիւնը ընելով
արտասահմանի հայութեան ամէն
գաղափարի պատասխանատուու-
թիւնները գծել փորձէինք,
քաջիկեր կան որոնք պիտի
կրնային, ճակատին բաց ու
ձեռքերնին խիղճին վրայ, ներ-
կայանալ հանգ դատաստանին առ-
ջև՝ արեւին տակ :

Թուրքով ու մուրով սեցած պի-
տի ըլլայ այդ տարեգրութիւնը :

Ի՞նչ ըրին մեր հարուստ Մե-
ծապատիւ Էֆենտիները, երբ
իրենց համարին եղբայրները
հեռուէն օգնութիւն կաղաղակե-
նէնց ապառաժուտ կղզիացու-
մովը պատասխանեցին անոնք
այդ հոգեվարքի աղաղակին, ու
թողուցին որ յեղափոխութեան
պէս ծանր գործ մը ամեն հա-
ղիպողի ձեռքին մէջ խաղալիկ
դառնայ :

Ի՞նչ ըրաւ մեր շնորհունակ մե-
ծափոր դասակարգը, երբ հայ
եղբայրներ իրենց քթին տակ
զիրար կը բզկտեն :

Ի՞նչ ըրաւ մեր յեղափոխու-
թիւնը...

Ի՞նչ ըրին սա չէզոք կաշուած
յիմարաբար իրենք զիրենք զար-
գացած կարծողները :

Հա՛պա սա անտարբերներու
բանակը :

Հա՛պա սա մեր կիները. եթէ
ասոնք պիտի ըլլան մեզի արիւ-
թիւն ու անձնազոհութիւն ներ-
շնչողները՝ քառորդ դար մը
կը բաւէ իրենց մնա՛ք բարով
ըսելու համար. իսկ եթէ մեր
նորահաս պչրառէր ունիւնները ի-
րենց մայրերու պէս պիտի ըլլան,
վա՛յն է եկեր այն ատեն մեր
գլխուն...

Ու երբ այս սահմակցնող
պատկերները աչքի առջև կու-
նենանք, կարելի է մենք մեզի
հարցնել թէ՛ ի՞նչով արժանի
ենք այդ անկախ կեանքին, եթէ
չէ ոչխարի պէս մորթուածներու
արեան անարգ գինովը :

Նախ դուն քեզի օգնէ, ո՛վ
մարդ, որ ապա մարդասէր եւ-
րոպն ալ օգնէ քեզի :

ՊԱՆԱՆՁՆԵՐ

Դրօշակի առաջին էջը գրաւած
է բարենորոգման պահանջներու
ցանկ մը՝ ներկայացուած երեք
հիւպատոսներու և ստորագրուած
Անդրանիկի, Սարհատի և Տարօն-
ցիի կողմէ :

Այդ պահանջները մենք հոս
նոյնութեամբ կարտատպենք,
գիտնալով թէ պահանջել «առնել»
ըսել չէ, և թէ անոնք այն պա-
րագային արժէք պիտի ունենա-
յին, երբ ապացուցուէր թէ ա-
նոնց ետեւ մեծ ուժ մը պատ-
րաստ կայ թշնամին սարսափե-
ցնող իսկ հիմակ, աւա՛ղ, մեր
յեղափոխ ուժին ոչնչութիւնը
միայն ապացուցած եղանք, և
այժմ մեր այդ տկարութեան և
6000 հայ ոչխարի պէս կոտոր-
ուելուն փոխարէն պահանջներ
կը ներկայացնենք. պահանջներ
որոնցմէ ալ աւելին նախատես-
ուած է 95 մայիս 11 ի ծրագրին
մէջ. բայց անոր գործադրութիւն

նոր, շատոնց հասկացուցաւ թէ, կարեւոր ուժով և րազարական պարագաներու նկատառումով կարելի է ձեռք բերել ինչ սրկը պակաս Սասնոյ շարժումին մէջ

ա) Բոլոր բացառիկ ու մամոնակաւոր հարկերուն ոչնչացումը ։ Գանձակութեամբ առաջարկու փոխարէն իւրաքանչիւր ընտանիքի համար հողային կալանքներու համեմատութեամբ միանգամ տուրքի մը հաստատումը ։ Ջնջումն տառնորդական վարձակալութեան (աշար իլթիգամը), որ բոնարարութիւն մըն է հողագործի արգար վաստակներուն ։

բ) Տասը տարուան համար հարկերէ ազատում՝ հայերու տնտեսական քայքայումի վիճակը վերականգնելու համար ։ Ապագային հողային ընտանիքի մը համար 20 տարեկաններ ու կառավարական պաշտօնեաներ չգործածել տուրքեր հաւաքելու ։ Տեղական եկամուտը գործածել տեղական տնտեսական պէտքերուն ։

գ) Ջնջել զինւորական տուրքը եւ անոր փոխարէն հաստ պէլ ընդհանուր զինւորագործիւն, հայ զինւորներէն կազմելով առանձին գնդեր ։

դ) Գիւղային ազգաբնակչութեան իրազեղ կենցաղավարութեանը համար իւրաքանչիւրի բնակչութեան թւին համաձայն 5-10 պահապաններու նշանակումը, որոնք պէտք է զինուած ըլլան արագաձիգ հրացաններով ։

ե) Ջնջել զէնք կրելու իրաւունքը իսլամական տարբերու համար, որոնք զայն կը գործածեն իսլամ փողովուրդը կեղեքելու եւ փնջնելու հակառակ պարագայի մէջ ամէն կարգի հրապարակաւ համար արտօնութիւն զէնք կրելու եւ հաստարակէն սզատ ըլլալ ինքնապաշտպանութեան իրաւունքին մէջ ։

զ) Վերադարձումն Հայոց այն բոլոր հողերուն, զորս իսլամներու խռովանք կամ կառավարութիւնը գրաւել է հայերէն՝ ուս-թրքական պատերազմէն վերջ՝ թէ՛ բնութեամբ եւ թէ՛ զանազան էնթիքներով ։ Վերադարձումը հայ եկեղեցւոյ այն նւերական վայրերուն՝ զարաւոր ու խտտաբնակչութեամբ, տաճարներու, վկայարարներու, գիւղիկներու եւն, որոնք հակառակ իրենց նւերականութեան, գրաւուել են այս կամ այն թիւրք տղաներէ կամ քերթ պէյերէ եւն ։

է) Վերահաստատումն սահմանադրական կարգերու, Դաւանանքներու կատարելով ազատութիւն եւ հաւասարութիւն ։ Հայ եկեղեցւոյ նախկին առանձնաշնորհմանց պահպանումը՝ զըզրոցներու, եկեղեցիներու շինութեանց եւ բարեկարգութեանց համար ։ Կատարելով թոյլտուութիւն հայ ուխտաւորութեան՝ իրենց ազգային վանքերու եւ սրբութիւններու ։ Տեղական մամուլի հաստատութիւն ։

ը) Ազատ իրաւունք անցազրի առեւտուրի, վաճառականութեան, աւելափոխութեան եւն ։

թ) Դատաստանական բարենորոգումներ, որով ապահովելն ազգաբնակչութեան ամէն զանգու իրաւունքներն եւ կատարելով հաւասարութեան սպասանութիւնը ։

ժ) Բոլոր հայ գաղթականներուն (օսմ. հողերէ եւ թէ՛ սրտասահմանէ) վերադարձումը. կատարելով իրաւունք իրենց հայրենի հողերուն տիրելու, վերադարձումն կրճատած իրաւունքներու ։

ժա) Ազատութիւն բոլոր քաղաքական հայ բանտարկեալներու եւ ամբաստանեալներու եւն ։

ժբ) Իրենց չարադրութիւնները սահմարձակ ի գործ դնող քերթ հեծեղազորաց արդի աւերիչ կացութեան ջնջումը կամ բարեփոխումը ։ Արդիւի իսպառ որ վրանարնակ քերթեր ամառանոցի պատրուակով հայոց պատկանած լեռները չ'իջնեն, սովորութիւն մը, որ յնջուած էր ԶԿ Ի զկալին վերջ իրաւունքով, սակայն Սասնոյ կառավարութեան թոյլտուած է ի վրնաս հայերուն, մինչդեռ խեղճ ժողովուրդը զրկուած է իր ամառանոցներէն օգուելէ ։

ժգ) Կառավարական մը նշանակումը հայկական վեց նահանգներու համար՝ եւրոպական մեծ պետութեանց հակողութեան տակ որ պիտի կառավարէ ազգաբնակչութեան կողմէ ընտրուած խորհրդին աշակցութեամբ ։ Կառավարչը պէտք է որ քրիստոնեայ ըլլայ ։

ժդ) Ազգաբնակչութեան թիւ համեմատ կազմակերպել ժողովուրդներ, որոնց մէջ պէտք է լինին քրիստոնեայ պաշտօնեաներ, այն է՝ եւրոպացի բուպաներ, եւ որոնց վերահսկողութեան տակ՝ զրի մանդարներին կազմը ։

ժե) Ընդհանուր հասուցում Սասնուն եւ Մշոյ գաշտի հայոց վեհաներուն զիւրերուն վերականգնումը. որոնց տուններուն չինութիւնը, տարեկան ուսեւսող զգեստի, տնական պէտքերու, գոյքերու հոգացում եւն. ինչպէս եւ հողային եւ մշակական գործիքներ ։

Ի Դիմաց Տարծնոյ Սասնոյ
Կեդր. Կոմիտէներու
ԱՆԴՐԱՆԻՍ, ՍԽՐՀԱՏ, ՏԱՐՕՆԵՏԻ
(Կիւնքեր)

Դիմում կաւելցնէ թէ ուրիշ ծանուցագիր մըն ալ յանձնուած է հիւպատոսներուն, որով ազդուօրէն բողոքելով Սասնունի մէջ գործողներ շինելու գէժ պահանջած են կառուցման արգելութիւնը սպառնալով հակառակ պարագային նոր ուժերով դէպքերու վերականգնումը ։

Դիմ. Խմբ. — Աստուած պահէ մեզ այդ վերականգնման, որ փորձանք մըն է մեզ իսկ թուրքերուն լաւ աւելթ մը անգէն հայը շնջելու ։

ՀԱՅՈՒԱԿԱՆ

Կ. Պոլիս 17 օգոստոս

Ինչպէս ասկէ առաջ ծանուցելիք յանուն համայն հայ ազգին յանձնարարութեամբ մը Եւրոպայ մեկնեցաւ, բան մը որ մեծ զայրույթ պատճառեց թուրքերուն ։ Կերեւի որ հայ պատուիրակները ալէն օր համակրութիւն կը չափն Եւրոպայի միջ իրենց կրակոտ խօսքերով ի վեր հանելով իրենց ազգակիցներու կրած սեւեւալի նեղութիւնները ։

Որովհետեւ յանձնարարութեամբ մող անձերը ալէն ալ հեղինակաւոր անձեր են, անոնց ամէն պատմածները ճշմարիտ կը նկատուին Եւրոպայի մէջ ։

Անոնք յաշնդեցան արդէն արտասահմանի մէջ հոսանք մը յառաջ բերել յօգուտ իրենց

գաւին ։

Իրենց խօսքերով առեւտարները Անգլիոյ թագաւորը կը հրաւիրեն որպէսզի Հայերը թուրքերէն պաշտպանելու իր տուած խոտուածը կատարէ ։ Անոնք մեծ պետութեանց ուշադրութիւնը կը հրաւիրեն 1895 ի յիշատակագրին վրայ, զոր գծեցին պետութիւնները եւ որ գեղեցիկորէն յիշուած է ։

Եւ, իրօք, եթէ պետութիւնները չուտարիյթ ու ազդու միջոցներ ձեռք չառնեն, այն առեւտարները աւելի մեծ համեմատութիւններ պիտի ստանան, եւ կրնայ մինչեւ իսկ ամբողջ ազգը անհետանալ ։ Հայաստանի մէջ ամէն օր փառքիկ ջարդեր տեղի կունենան ։ Հայաստանի ինչ ինչ տեղերէն հիւպատոսներու եւ կանչուելը շատ տխուր ազդեցութիւն կը գործէ բնակիչներուն վրայ, որովհետեւ անոնց ներկայութիւնը կոտորածներուն արգելք կ'ըլլար ։

Գաղով Մուշի գործերու վիճակին, արժանահաւատ աղբիւրքէ կ'իմանաւ, որ թիւրք իշխանութիւնները գեւ արձակած չեն այն ապստամբները որոնք անձնատուր եղած էին ազատ ձգուելու խոտուածով ։

Սասնունի մէջ այրուած տունները գեւ վերաշինուած չեն եւ չպիտի կրնան շինուիլ, որովհետեւ անոնց տէրերուն միայն մեկական օսմ. սակի կը տրուի եւ խիստ քիչ անգամ երկուքական ։ Բնակչութիւնը վերջին ծայր չըստրութեան մատնուած է, եւ ուսեւսող պէտք ունի ։ Կառավարութիւնը կարօտեալներուն օրական 10 բարա միայն կուտայ անձ գլուխ ։

Ամենախիտ բնակչութիւն պատահակաւ տեղերը կառավարութիւնը զօրանոցներ կանգնած է ։ Միայն Սասնունի մէջ 6 նոր զօրանոցներ կան ։ Հիւպատոսներուն Մուշի մէջ ներկայութիւնը արգելք կ'ըլլար Գիւրտերուն եւ զօրքերուն վայրագութիւնների գործածելու ։

ՍԱՄՍՈՆ

«Վիշերնա բոլթա»

ՌՈՒՍՕ—ՀԱՅ ՊԱՏԵՐԱԶՄԻՐ

Դիմում է կը տեղեկանանք թէ յուլիս 30 ին 61 հարկէ բաղկացեալ խումբ մը Օլթիի գաւառէն մեկնելով, թրքական սահմանը հաղկեց անցած, երկու ռեկերի անխոհմտութեան պատճառով, որոս սահմանապահ զինուորներէ կը նշմարուի ։ Այս վտանքը տեսնելով հանդիման թէ հայ խումբը իրենց սահմանէն 4-5 վերստ հեռացած է ու թուրքիոյ ներքերը կը յառաջանայ, ցածութիւնը ունեցած են անմիջապէս թէ հայ խումբը հետապնդուելու եւ թէ թուրք զինուորներուն լուր տալու որ պատրաստ ըլլան հայերը զիմաւորե-

լու ։ Եւ այդ կերպով մեր քաղ. հայրենակիցները մնացած են երկու կրակի մէջ տեղ. բայց հակառակ ուսեւսրու ամենարեւոյն հրացանաձգութեան բնաւ ասոնց դէմ զնէք չեն արձակած եւ միայն իրենց հրացանները գործածած են թուրք զօրքերուն, զէմ ։ Սակայն ուսեւսրը հայ հայրենասէրներու այդ վիճաններէն ազդուելով փոխանակ ձեռնպահ մնալու, քանի որ այլեւս թուրք զօրքը հասած էր, աւելի կը յառաջանան ու երեք կողմէ կը շրջապահեն մերկները ։ Ասոնք տանապիտ Անուշաւանը կը զրկեն ուսեւս հրամանատարին ըսելու «մեք ձեզ հետ կուի չուենք եւ ձեր սահմանէն դուրս, եւք, կերթանք թուրք երկրին ներքեր թրքերու հետ կուուելու համար, ուստի կը խղարենք ձեր զօրքերը եւ քաշեցէք » ։ Այս խղարները հազիւ 15 վայրկեան ուսեւսրուն կրակը կը զադրեցնէ, ու անա Օլթիի ուսեւս հրամանատարը թիկով հանելով կը հրամայէ յարձակուի վերականգնել խիստ կերպով ։ Հայ խումբը երկրորդ պատգամաւ մը եւս կը զրկէ, բայց ապարդիւն ։ Թուրքերը պատերազմի փողը հնչեցնելով «ուսա» գոչելով երեք կողմէ հայերուն վրայ կըրակ կը տեղեկացնեն, Հայերը կրկին անոնց կրակով չեն պատասխաներ ու միայն իրենց գնդակներով կը պատահեն չորրորդ կողմէն յառաջացող թուրք զօրքերը, որոնք բաւական զոներ տալով եւ կը փախնին, բայց ուսեւսրէն քաշաւերուած կրկին կը յառաջանան ։

Հայ խումբին մէջ գտնուող քահանան որ տանապիտ ալ էր, իր տանապիտ զիւրքը փոխել եւ խմբապետին մօտ երթալ կը հրամայէ իր ընկերներուն եւ ինք իր զիւրքը ձգելով, խաչը վր բարձրացուցած կուզուի զէպի ուսեւսր, իրեւ երրորդ պատգամաւոր, բայց խաչն ալ օգուտ չըներ ու քահանան ուսեւս զինուորի մը գնդակէն կրնայ ։ Կերեւ աւելի կը տաքայ ։ Հայ տղաքը բարձր ձայնով ուսեւսրուն կը կրկնեն «անիդեք, դուք ինչու մեր վերայ կրակ կընէք մինք ձեզ չենք պատասխանել կոր, » Բայց անօգուտ, ուսեւսրը գնդակներէն հեռագնաց կրնան հայ քաղերը ։ Խմբապետը տեսնելով թէ այլեւս ապարդիւն կերպի է, անձնատուր ըլլալու փողը կը հնչեցնէ, ուսեւս զինուորները կրկին կրակը կը շարունակեն կարկուտի նման, Խմբապետը զրօշակը անհեղձ 10-12 ընկերներով զնդակներու տարափին տակ կերթայ զէպի ուսեւս զօրքերը յանձնուելունը պատակաւ, ուսեւսրանոց բաւական մօտ երթալու միջոց տալով, յանկարծ կը կրակեն ու 10 հայեր ալ զետին կը տապալեն ։

Քառասուն հողիւնոց ուրիշ հայ խումբ մը եւս Զօրի զօրանոցի վրայ յաջող յարձակում մը ընելէ յետոյ, յուլիս 12 ին երբ Զօրքի բարձունքները կը քաշուի հանգստանալու եւ խորհրդակցելու համար, յանկարծ զնդակներ կը տեղան ու 5-6 հայեր կրնան ։ Այդ ուսեւս խաղաղներու ուսահմանապահ զօրքերու դաւադրութիւն էր երեք սպանելու զեկավարութեամբ ։ Հայերը վիճաններէն իրենց կուենեան դաւադրական կրակին ալ չը պատասխանելու ։ Անոնց անձնատուր ըլլալու, նշաններն ալ ուսեւս սպանելը չ'են ընդունիր ու կրակը շարունակել կուտան ։ Խումբը կը ցրուի, մէկ մասը կը ձերբակալուի ուսեւսրէ եւ ուրիշ մաս մը կազատի փախուստով ։

Այս երկու ախուր զէպերը բացորոշ ցոյց կուտան թէ՛ ռուսական խաչը թրքական մահիկին հետ դաշնակցած է Հայերու դէմ : Այս տնայկ համա- ձայնութիւնը Պոլսոյ եւ Բեթերս- պուրկի մէջ գոյացած ըլլալու լուրը այս զէպերով ալ գործնականացէս կը հաստատուի : «Ռուս կառավարու- թեան դէմ պատերազմ պիտի մղենք» պատառը տարգրութիւններուն աչքը լոյս : անասիկ ուսու-հայ պատերազմը սկսած է :

ՊԱՏԵՐԱԶԻՐ

Այս օրեր Բօրթ Արթուրէն աւելի հետաքրքրական է Լիւսի-Եանիկի մօտե- րը ընդ, ճակատամարտի սկսող երկու- թիւնով բանակներու վիճակը : Բայց այդ մասին, մինչեւ ներկայ տողերը գրուած պահուն ստոյգ լուրեր կը պակսին մեզ : Ըստդէն կան թէ հոն ճառագողները անյաջողութիւն մը ու- նեցած են՝ 32 թնգաթաթ ուսերուն ձգելով, ուրիշներ ալ 6000 ուս կ'աւորուեն է կ'ըսեն : Սակայն այս մա- սին մենք կը հրաւիրենք մեր ընթեր- ցողներու ուշադրութիւնը մեր ներ- կայ թիւի չորրորդ երեսին, ուր կը գտնուին վերջին լուրերը եւ հետա- գրիւնները :

Դառնալով ուս նաւատորմի ներ- կայ վիճակին, այժմ գիտենք թէ Բօրթ-Արթուրի աւորակէն չորս յաժա- տորակ եւ թորփիւհայտաներու մե- ծագոյն մասը ընկղմած կամ չէզոք նաւահանգիստներու մէջ գինաթափ եղած են : Բօրթ-Արթուրի եօթը զրա- հաւորներէն մէկը, Պայիւսե, ծանրա- պէս վնասուած ըլլալով, փախուստի իսկ չը մասնակցեցաւ, ուրիշ մէ, Սեպարեկի ծովակալին նաւը, չէ- զոք նաւահանգիստ մը փախած է : միւս հինգը Բօրթ-Արթուր վերադար- ձած են վնասուած : միջապիս ա- սանցմէ մին, Սեվ-գրաքոյ ուսա- կան աւաղի մը չպէտքով մեծապէս վնասուած է :

Վլադիմիր Կառնապուրի յաժառակներու նաւարաթինը գործելու վիճակէն դուրկ է այլ եւս, Պոլսի իւր միշտ նորագե- լու վրայ : Բարիքը ընկղմած, միւս երկուքն լալ ծովակալ Գաւրիմուրայի ճարտարական աւորիղին հետ ընդհան- րու մը դառնալով փորձին նիթար- կուած : Միջերկրականի, Սալանտեա- նի եւ Հնդկական օվկիանոսի մէջ ռուսական անջատ նաւերու շարժում- ները կը մասնաշաղկիւն : Բայց Պալ- թիկի նաւատորմը միշտ Գոնջիլմաս կը մնայ եւ ստոր մեկնուածը հետզհետէ տարակուսական կը դառնայ : Առ այ- ժմ ծովը ճարտարներուն ձեռքն է :

Յամաքի վրայ ճարտարներ յայտնի է թէ ամէն ինչ կ'ընեն Բօրթ Արթուրը գրաւելու համար : Եւ ուս պահպանող զօրքը զայն կը պաշտպանէ ամենաուղ- ղու կերպով : Բայց հակառակ Ռուսաց զերմարդկային ճիգերուն՝ բերդաքա- զաքին անկուած խիստ մօտաւորու է, եւ ալ աւելի առաջ ինկած պիտի ըլլար եթէ սարերիկայ անհամար ականա- լու երկրիւր չըլլար : Զօրավար Շթէո սէլ՝ ալ համոզուած քաղաքին անկու- մին, հրամայած է նաւահանգիստի մէջ գանուող նաւերը ընկղմել եւ անոնց խնդանթիւնը ու նաւագէիւրը ցամաք հանել ներսի ուժը աւելցնելու համար :

Ռուսիայէ նոր զրկուած զինուոր- ներուն մեծագոյն մասը խալպինի եւ Վլադիմիր Կառնապուրի գծին վրայ երկրորդ բանակ մը կազմուել կ'ընեն : Այս բանակը որ կը ճակատի հարաւային կողմը, իրեն յառաջապահ ունի այն խաղախները որոնք քանի մը ամիսնե- լէ ի վեր Գորէսայի, Հրաբային-Որե- լեկանի կողմը կը գտնուէին : Եթէ Բօրթ-Արթուրը զիմանար՝ զբաղեցնե- լով ճարտարական զօրքին կէսը, եթէ նաւատորմը չը փախչաւուէր՝ ճար նա- կան լաւագոյն նաւերը իր գէմ պա- հելով եւ արդիւնով Վլադիմիր Կառնա- կէնասի եւ միջին գծերու պաշարու- մը, Գորէսայի պիտի կրնար փոր- ձել իր երկու բանակները առաջ քը չել 3-4 շաբաթէն : Բայց նաւատոր- միդը ջախջախուած է կամ ցրուած : Բօրթ Արթուրը շատ մօտիկէն պաշա- ուած, այլեւս Ռուսներու միջոց չէ

մնացած յառաջանալու : Ամէն օր գէպի Մանչուրիա նոր ուս զինուորներ կը զրկուին ըսինք- բայց միջին հաշուով օրական հազի- 1600 զինուոր կարելի կըլլայ փոխա- ցելու : Կառնապուրը գերութեամբ կ'երթնեն անգրապերական գծին մէկ ծայրէն միւսը օրը 13 կառա- խումբ կանցնի իւրաքանչիւր կողմի վրայ : Բայց առնուազն անոնց կէսը պիտոյքնիր փոխադրելու յատկացած է : Անգրապերական գիծը լաւ վիճակի մէջ է եւ միշտ կը բարեկարգուի : Պայ- ցալի գիծը գրեթէ լրացած է : Բայց զինուորական փոխադրու- թիւնները եւ ճանապարհի շինութեան եւ այլ գործերը Ռուսները շատ ուշ սկսեցին : Բայց սպառազինութիւն եւ հրամատարութեան առաւելութեան ճարտար ատաղին օրէն ունեցան ժամանակի առաւելութիւնը զոր կը պահեն :

ԼՈՒՐԵՐ

Դժոխակ է ԿԱՐՏԱՏՊԵՆԻ ՀԵՏԵԻՆԱԼ ԼՈՒՐԵՐԸ : Ձրանսական արտաքին գործերի մի- նիստը Ռուսիան ուղարկուած է 30 հա- լար ֆր. իր հիւպատոսարանի միջո- ցով Սասունի արկածախնդրին բաժա- նելու համար : Նոյն նպատակով մի- նիստը Ռուսիան իր ձեռքի առկ ունի դարձնալ 5,000 ֆր. : Մեզ հաղորդու- լաւանակի աղբիւրից, որ պ. Դիկասէ համաձայնել է գումարները հասցնել նպատակին :

Մեզ գրուած են Կարսից. — «Յուլիսի 23-ին զիշերայ ժամը 10 ու կէսին, աչոքի են թարկուել կա- ռաւարչական տատիճանուոր Վաթի Դորոգով, որ վարուած էր ժամպարմայի թարգմանի պաշտոն : Տէնթորիսը չէ ձերբակալուած : Մանրամասները յա- ջորդ համակով » :

Անգրկովկասեան քաղաքներէ մէ- կում, ինչպէս մեզ տեղեկացնում են օդանավի ընկերները, ռուսկանութիւ-

նը փորձում է կ'եղծել յեղափոխա- կան կոմիտէների կնիքը, զաղանքներ իմանալու եւ հասարակութիւնը մոլո- րեցնելու նպատակով : Փաստը վերս- առգում է, եւ մենք շտապում ենք զգուշացնել թէ՛ դաշնակցական մար- մինն իրն եւ թէ՛ առհասարակ յեղա- փոխական բոլոր կազմակերպութիւն- ներին, որոնք կարող են զոհ լինել ու իրանական այդ նորաձեւ դաւին :

Հոկտեմբերի 3-ին Ամերիկայի Բոս- տոն քաղաքում պէտք է բացուի Մի- ջազգային կազմակերպութեան կօնգրէ- սը : Նախորդ տարիների նման՝ այս տարի եւս մի յատուկ պատգամաւորի միջոցով այդ կարեւոր ժողովին պէտք է ներկայացուի հայկական խնդիրը եւ կուող հայ ժողովրդի պահանջը : Սէն- Լուի քաղաքում եւս, ուր համալսար- հային ցոյցահանդէսի առիթով տեղի պիտի ունենան կարեւոր կօնգրէսներ, պիտի արժարժուի հայոց խնդիրը :

Յունիսի 19-ից մեզ գրում են Մուշեց.

«Կառավարութիւնը չը շարունակէ հալածել, լռուած այն ահէն, թէ յե- ղափոխական շարժումը պիտի վերա- նորուի լեռներուն մէջ : Առանձին ուշք կը դարձնի յեղափոխական խըմ- բապետներու ոչնչացման գործին վը- րայ : Լուր կը պատի, որ Վահան ան- հետացած է. թուրք իշխանութիւնը ամէն միջոց ի գործ կը դնէ իսկու- թիւնը իմանալու : Անգրանիկի վեճա- կը հալածական է եւ աւելի զգուշ- քան առաջ, որովհետեւ տեղական իշ- խանութիւնը յատկապէս անոր ետե- լէն ընկած է » :

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն

Ազգային Երկուստ վարժարաններու Հոգաբարձութիւնը կը ծանուցանէ ար- գոյ հասարակութեան՝ որ վարժարան- ները պիտի բացուին յառաջիկայ Սեպտեմբեր 1-ին. —

Մուտքի արձանագրութիւնք կըս- կըսին յառաջիկայ կիւրակի օգոստոս

ՆԵՐՍԵՍ ԱՅՏԱՐԱԿԵՑԻ

(Արտատպուած ՌԱԶՄԱՎԷՊ հանդէսէ)

Սարգսրապատի բերդի առնուելը Ռուսաց հա- մար մեծ նշանակութիւն ունեցաւ : հացի այնպիսի առատ պաշար ունեցան, որ բաւականացաւ բոլոր բանակին շատ ժամանակ : մինչեւ Երեւանի բեր- դի առումն եւ նորանից դեռ յետոյ այդ ցորե- ներն էին գործ ածում : Սարգսրապատի նուաճու- մից յետոյ Պաակեիլը բոլոր բանակի զօրութիւ- նը վարձրեց Երեւանի բերդի պաշարման վերայ : եւ պաշարման գործի կարգադրութիւնն յանձնեց դե- ներայ Կրասովկուս : Ռուսաց բանակը գրուած էր Միւրի ասուած ըլլալի վերայ : այդտեղից թի- զանթններն աւարկուած էին բերդապարսպի բուրգերը եւ բերդի ներսը : Հիւսէին խան սար- դարը յանձնելով բերդի պաշտպանութիւնը իւր եղբորն Հասան խանին, ինքն իւր ընտանիքով գնացել էր Պարսկաստան : Սեպտեմբերի վեր- ջերում սկսուեց Երեւանի բերդի պաշարումն եւ կարճ միջոցում Ռուսաց թնդանթիւնի ռմակո- ծութիւնից բերդի թէլլի բուրջ կոչուած բուր- գը տապալուեց, նոյնպէս հիւսիսային պարսպի մի կողմը : Պարսիկներն էլ բերդից ուսմեր էին

ձգում Ռուսաց բանակը, բայց վնաս չէին տա- լիս : Տեսնելով գլխաւոր բուրգի եւ բերդի տա- պալումն, եւ երկու կողմով, թէ Ռուսները յար- ձակումով (շտուրմ) գրոհ կըտան, թէ պարսիկ զօրքն եւ թէ բ'րդում պատապարուած Երեւանի ժամանակական բնակիչներն առկուում են Հասան խանին անձնատուր լինելու : խանը տեսնելով թէ այլ եւս անհնարին է պաշտպանուել, սաստիկ հր- կիւղ կ'ընէր թէ Ռուսները յարձակումով ներս խուժածին պէս զինուորներին բուրգին էլ, իրան էլ եւ այն տեղ ապաստանուած քաղաքացիներ- ին էլ կը կոտորէին : ակամայ համաձայնում է անձնատուր լինելու եւ ստիպում է իջնաձիւնի ե- պիսկոպոսներին եւ միւս հայ հոգեւորականնե- ին, որոնք իբրեւ պատանդ տարուած էին բեր- գը, իսկ ու խաչուվառով եւ պատկերներով զիմա- ւորել Ռուսաց զօրքին : այն մտքով թէ Ռուսները կը մեղմանան եւ սրակոտոր չեն անի բերդապա- շարքն եւ միւս ապաստաններին, իսկ ինքը խանը թագ է կրնում մէջիտի մէջ : Բերդի պա- րսպի վերայ բարձրացած Պարսիկներն սկսում են գոռով զէպ ի Ռուսաց բանակը : «Ռայի օտձի» (անձնատուր ենք լինում) : Այս բառին Ռու- սաց զօրքը միախառն զիմում են գէպ ի բերդն եւ ստիպում բերդականներին զոհերը բանալ : Կրասովկուս ագիւտանտը լինելով աշխոյժ երիտա- սարդ՝ ամենից առաջ ինքն է մօտենում բերդի դրանն եւ բաղնում ու ձայն տալիս, որ բաց ա-

նեն : Ներսից գրան ձեղքից հրացան են արձա- կում նորա վերայ եւ աջ թեւը վերաւորում նոյն ժամայն բերդի դուռը բացուեց եւ իջնաձիւնի հոգեւորականները զիմաւորեցին զօրքին եկեղե- ցական հանդէսով : Երբ հարցրեցին Ռուսները թէ ո'ր է բերդի հրամանատարը, Հասան խանը, տարան նորա թագստեան տեղը ցոյց տուեցին : Նորան իսկին կալանաւորեցին : Պաակեիլը հար- ցրեց նորան, թէ ինչո՞ւ այս բերդն էլ Սարգա- րապատի բերդի նման չուտով չտուեցիր : նա պատասխանեց : «Սարգսրապատի բերդն Շահի հրա- մանով եւ էի կառուցել եւ համարվում էր իմ սե- փականութիւն : իսկ սա թագաւորական լինելով եւ Շահի բարձր հրամանով կարգուած էի հրա- մանատար մինչեւ վերջին ճիգն ի գործ դնել » : Պաակեիլն ասաց նորան : «Դու պարծեցել էիր մինչեւ Պետերբուրգ պարսից զօրքով չափախուել (որչաւանք) գնալ : անա այժմ ուղարկում եմ քեզ մէն մենակ Պետերբուրգ, եւ Հասան խանին զինուո- րեցով ուղարկեց թիֆլիզ ի միամտութիւն քաղա- քացիների եւ չրջակայ բնակիչների : որովհետեւ Հասան խանը 1827 թուին անակնկալ կերպով խաթմում փարսիկ զօրքով յարձակած էր Ռու- սաց առանձին եւ շատ բարբարոսութիւններ էր արել, կողոպտելով եւ գերի վարելով աղջիկ, կին տղա, մարդ, երեխայ եւ այլն :

(Շարունակելի)

22-ին առաւօտեան ժամը 9-էն մինչեւ 12 ամէն օր, Ազգային խորհուրդարանի մէջ:

Կանոնաւոր դասախօսութիւնք պիտի սկսին Սեպտեմբեր 6-ին, սակայն աշակերտներու ներկայութիւնը պարտաւորել է ամսի 1-ին:

Պիտի կարգուի Մասնախումբ, որ պիտի բաժանէ թօշակաւոր աշակերտները երեք դասակարգի. Ա. ֆը. 4-8-ֆը 3- Գ. ֆը. 1-2: Զրի պիտի բնագոնուին միայն վկայաւ աղքատները:

Թշակները վճարելի են կանխիկ իւրաքանչիւր ամսագլխի:

Այս տարի Ազգային եւ Մանչեսթըր վարժարանները իրարմէ զատուած պիտի ըլլան:

Ասիէ զատ, երկու սեռի նախակրթութեան ներքին համար ալ պիտի բացուի եւ դասարան, որ շարունակութիւնն է նախնական Գ. դասարանի:

Հոգաբարձութիւնը մտադիր է նաեւ, նոյն իսկ այս տարուէն, բանալ Զ. դասարան, եթէ ատոր համար բաւարար թուով եւ համապատասխան պատրաստութեամբ աշակերտներ ներկայանան:

Դպրոցներու բարեկարգութեան նշանակալից մեծան համար Հոգաբարձութիւնը ամէն կարելի ջանքեր դրած պիտի գնէ. ուստի կը յուսանք թէ Հասարակութիւնն ալ իր կողմէ չըզլանայ իրեն ամէն կերպով ձեռնառնելու, որպէս զի գործ դրուած ջանքերը եւ այս տարուայ համար մասնաւորապէս եղած նիւթական զօնոգութիւնները ապագային չմնան:

Ի Դիմաց Ազգ. երկ. վարժարաններու Հոգաբարձութեան
Ասեմագլխի Գ. Ասեմագլխի
Զգոն Գ. Թոնպլըգլեան

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Սօն բերչենպէ կիւնիւ Սուրթան Համիտին ճիւղաւ օլմագ միւնսթիպէթլէ, սայիւր սէնէլէր կիպի պիր չօղ շիւրհէլի էրմէնիլէր վէ Պուկարլար Սթանպուլ տա տէրտէսթ օլընտըլար:

—Շաքիր բաշա սօն տէֆա Իբէկէ կիթմէսինտէ մահպուս պուլընան Արնալուտ ճանի վէ շաքիլէրտէն 20 քիշի սէրպէթ պըրագմըլ տըր: Խապսէթլէրի իլէ մարուֆ մէղքիւր միւսթիմլէրէ օլընան պու միւստտէ տիկէրլէրինէ թէշլիդ ատա օլընտըլար:

—Պիթլիս վալիսինին Պապը Ալիյէ պիր թէլէկրաֆլէ պիւտիւրտիլի իւզրէ, էրմէնի գօթիթա բէյիւր Անգրանիկ ինկիլիզ գօն սօլսընա պիր մէթթուպ Եօլլալուպ, եազընտա Պապը Ալիյէ գարշը տահա գուվլէթլի սուրէթտէ հապէթէթէ պաշլալաճազընը պիւտիւրմիշ: Ֆապթ Սթանպուլտքի ինկիլիզ սէֆարէթինտէ օ' Եօլլա պիր մէթթուպըն վիճուտինէ ինանըլմա յօր:

—Վան վալիսինին պիր թէլէկրաֆլէ իւզրէ, մէղքիւր վիւլայէթ աալիլինտէ պիր էրմէնի չէթա-

սը կէօրիւլմիշ:

—Սուրթան Մուրադըն վէֆաթը միւնսթիպէթլէ էլիլէր լիւլթան Համիտէ պէյանը թէլէսիւֆ իթտիլէր:

—Սթիպաթի Սըրպ տէսթթը միւթէվէֆա Ֆէրմիլիանըն եէրինէ նապ օլընան Սէպաստիան սըրպ լահիպինէ վէրիլէն պէրաթ շու շարթլարլէ վէրիլտիլի Սփօպօմիւ Բէ նամ սըրպ կազէթա՝ ուր եազըլար:

1) Սերպիա՝ մաքթիմիա մէտէլէսի հապգընտա՝ Պուկարիա իլէ իթթիֆազ իթմէմէլի:

2) Սըրպ հօճալարըն շահատէթնամէլէրի տէսթթթիմէնի թաստիդ օլընմալուպ՝ Մէարիֆտէն թաստիդի:

3) Սօֆիատաքի Սըրպ գօնսուրը Ս. Սիւրիշ էկէր քէնտի պաշընա Պուկարի հիւրիւմէթի իլէ պիր իթթիֆադընամէ թանգիւր իտէր իսէ անըն ալըլ վէ իթթիֆադըն ֆէսիլի իզթիլա իտէմէթ:

—«Պէրիլէր թալէպլաթ» ու Սթանպուլտան իշար օլընտըլը իւզրէ, սահիլլէրի մուհաֆազա իթմէթ իշիւն Պապը Ալի իրի գարագօլ վաթըրլարըն եաթըրմագ պապընտա ալման Սաքսէնպէրի ֆապրիգասը իլէ պիր գօնթուրաթ իմզալամըշ: Իշպու վաթըրլար Մաքսիմ թօրլար իլէ թէմհիզ օլընմագլար:

—«Սէմաֆօրա Սթանպուլտան իշար օլընտըլը իւզրէ, 2-3 հաթթա մուգատտէմ Օրմանեան Պատրիարք Երլուզա չաղըրըլուպ, կաթուղիկոս թարաթընտան էլրուբայա կէօնտէրիլիշ օլան եպիսկոպոսլարըն մէմուրիյէթինտէն տօլալը իշպահաթ իսթէնիլի: Օրմանեան ճէվապէն, օ' խուսուստա հիշ պիր մալիւմաթը օլմատըլընը, զիրա էշմիւթին իլէ մուխապէրէսի մէմու օլտըլընը պէյան իտէր, Իշպու ճէվապէթիպէթիլ վէ նիմ իսթիհաատ օլընտագ՝ Օրմանեանըն պիր գաշ սաաթ Երլուզտա գալմաթ էմր օլընուր: Պատրիարք հապս օլընըլար գանը իլէ գօրպար: Նիհայէթ կիթմէկէ էմր ալտըլը կիպի, տօղրու ինկիլիզ սէֆարէթինէ գօշար վէ գօրպուսը էլիլէ արզլէ, ինկիլթէրանըն հիմայէսի իսթիւրհամ իտէր: Սէֆարէթտէն չըղուպ Պատրիարքարանա կիտէրէ տէրհալ իսթիֆասընը եազար՝ Սուլթանըն սըրը քեաթիլի ֆահսին բաշայա Եօլլար: Ֆապթ Երլուզտա Օրմանեանըն եալթագ թապաաթընա աշնա օլտըլարընտան իսթիֆանամէի կէրի Եօլլարլար: Պատրիարք իթիւրադըլ իսթիֆասընը կէրի ալըր վէ մէսլէթինէ տէվամ իտէր:

—Կիրիտ գօմիւթի Բրէնս Եօրիլ Գօրէնհապ կիթիլ օլուպ, օրատան Բարիլէ, Բէթիւսպուրկա վէ Բօմայա ապիմէթլէ, Կիրիտին Եօնանիստան իլէ պիր էլէշիսի խուսըստտա էհալի-

նին ումումի բէյինէ քէնտիսի տալի հէմէֆթար պուլընտըլընը պէյան էլէյէմէթ իմիշ:

Մ Ո Ի Հ Ա Ր Է Պ Է

—Բուս թէլէկրաֆի աթանսը 17 թարիլիլ թէլէկրաֆը իւզրէ, սապահտան պաշլալան շէտիտ պիր մուհարէպէ Լիւսօ-Եանկ ճիւլարընտա տէվամ իթմէթտէ օլուպ, Բուս օրտուընըն իրի եանը իհաթէ իթմէթ իշիւն ճաթօնըլար պիւթիւն զայիլէթի սէմէրէսիզ գալմըշ: Բէվալէթէ կէօրէ, ճաթօնըլար 10 թօրտան զիյուտէ զայա իթմիշէր:

—Մէղքիւր գալիատան տօլալը Ջախարօլըն րարօրթը իւզրէ, ճաթօնըլար Բուսլարըն պիր թագըմմէվըլարընը գապթ իտէրլէր իսէտէ, գալիանըն սօն գրալընտա սիւնկիւ իլէ հիւճուվաթիթաթ իլէ Բուսլար օ մէվգըլարը կէրի ալմըլար: Գալիա ազալ սաաթ 9 տա պլթմիշ: ճաթօնըլարըն թէլէֆիաթը 3000 թահմին օլընըր ըմըշ:

—Ճաթօնըլարըն բէմի րարթընա պիւնաէն, Լիւսօ-Եանկ ճիւլարընտա վուգու պուլան գալիարտա (օգոստոս 12, 13, 14, վէ 17 տէ) Բուսլար ճէսուրանէ մուգալմէթ իթմիշէր: ճաթօնըն պիրինի օրտուր 2000 քիշի թէլէֆիաթ վէրմէթլէ Բուսլարըն մէվգըլարընը գապթ իթմիշ: տիկէր օրտուլար Անլանճանա իլէրլէմիշէր, օրտտան Բուսլար մուգալմէթ իթմէթսիլին կէրի գալմըլար: Ճաթօնըլար Բուսլարտան 16 թօր ալմըլար:

—Բուս թէլէկրաֆի աթանսըն օգոստ. 18 թարիլիլ Մուգալէնտէն պլտիւրտիլինէ էկէր ինանմագ լագու կէլիլ իսէ, պիր թըրէնլէ 209 ենսիր ճաթօնըլար նազլ օլընմաշ վէ տիկէր պիր թըրէն տալի եէսիլլէ պէլէնիլմէթտէ իմիշ: Բէվալէթէ կիօրէ՝ ճաթօնըլար պիր գաշ տէֆա սիւնկիւ իլէ հիւճուվաթ պիւրի սիւրիւլիլիշէր: տիւլաշնըն թէլէֆիաթը չօղ օլմուշ վէ մէյուտան մուհարէպէտէ 40 ատէթ թօր պըրագմըլ ըմըշ: . . .

—Լօնտոն 18 օգոստոս. — Լիւսօ Եանկտա Մուհարէպէ տէվամ իթմէթտէ: Կիւրլէր շէհիր իշէրսինէ տիւլմէթտէ տիւրլէր: Գուրօրաթիլինէ հէր կիւն եէնի իմտտա եէթիլիլար: Մուգալէրիլէթ քէնտիսինէ մէյիլի կէօրիւնիլար:

ՍՕՆ ԹԵԼԵԿՐԱԳՐԱՐ

Լօնտոն 19 օգոստ. — «Բէյթըր» թօրթօտան ալտըլը մալիւմաթ իւզրէ, Լիւսօ-Եանկ ճիւլարընտա մուհարէպէ էլան տէ-

վամ թմէթտէ, Պու կիլէ եէթլէն ճաթօն թէլէկրաֆլարը՝ հիշ պիր թարաֆըն էլան սէմէրէ հաթը իտէմէտիլինի պիւտիւրիլար:

Ձիֆու 19 — Բօրթ Արթուրտան ալըն 15 ինտէ կէլէն Ձիւլիլէր 5 նօմէրօ գալէ նէ Բուսլարըն վէն ճաթօնըլարըն էլինտէ օլմատըլը, վէ Իշան գալէսինի Բուսլար թէթըր կէրի ալտըլարը վէ Բօրթ Արթուրտա մէթիւլաթ գալմաթըլընը վէ պիր ճուվալ ունըն 11 րուպլի գըլմէթի օլտըլընը պիւտիւրիլար:

—Լօնտոն 19 օգոստ. — Թօրթօտան «Բէյթըր» թէլէկրաֆլէ պիւտիւրիլիլ իւզրէ, ճաթօնըլար Լիւսօ-Եանկը զապթ իթմիշէր: Բուսլարա էհէմիլիլթի իմտալար եէթիլիլ:

—Լօնտոն — Շիմալի շարգ ճիւլէթինտէն ճաթօնըլարըն իլէրլէմէթտէ օլտըլարը Մուգալէնտէն «Բէյթըր» պիւտիւրիլար:

Բէթէրապուրի 19 — օգոստ. Սալարալըն տիւնը թէլէկրաֆլէ իւզրէ, ազալ սաաթ 8 տէն 12 է գաալ, վուգու պուլան շէտիտ պիր մուհարէպէտէ Բուսլար մէվգըլարընը մուհաֆազա իտէպիլ միշէր: տիւլմանըն թէլէֆիաթը բէթ չօղ օլմալը: Ժէնէրալ Մօրօ զալ կարէլէնմիշ, Ժէնէրալ Շիւաքէլպէրի խաֆիֆէ եարէլէնմիշ: Սօն կիլէ սիւրիւնէթլէ կէլիլիշ:

—Սթանպուլ — Սուլթան Մուրաթ տէֆն օլընտը ատի թարգտա վէ 50 քիշի իլէ:

—Սէլանիկէ եազըն պիր չէթա կէօրիւնիլ վէ կրատօգօր քէօյլէնէ հիւճուվաթ իթմի վէ օրտանըն Բուսլարընը գալթ իտէրէթ տաղա չէթիլար:

Ի Լ Լ Ե

Կազէթա պէտէլինտէն պօրճարը օլան ապօնէլէրիլիլ տըր իսթաթնա մէլիլ Եօլլանըլմըշ օլմալէ, օգոստոս իթմաթնա գաալար էօնմէյէնլէրին կ-զէթաթ քէսիլէմէթ վէ 1903 տէն պօրճը օլանլալըն իսթիլլիլ նէլ օլընմագ ալը:

Одговорились А. Курбетиянъ
печатица "Взаимность" — Варна.